


891.99

U-45

8941



27

U.S. GOVERNMENT PRINTING OFFICE

WARRANT

NO 2003

74

ed 2

47

Ե. Տ. ԵՂԻԱԶԱՐԵԱՆ

891.99

Ե-45.

ԿՈԿՈՆՆԵՐ



1001
1064

معارف عمومیہ نظارت جلیلہ سنک فی ۳۰ ربیع الاخر سنہ ۳۱۹ و فی ۳ تموز ۳۱۷ تاریخلی و ۲۱۷ نومرولی رخصتنامه سیله طبع اولمشدر



Կ. ՊՈՒԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. ՍԱՐԵԱՆ ԷԻ ԸՆԿ.



31426-4.1

or

14666-58

206

ԱՌ ՄՏԵՐԻՄՍ

ԱՐԳԱՐ ԷՅ. Չ. ԵՕՁԿԱՐԼԵԱՆ

3. 2011

Անձկաշի Մտերիւնս ,

Կը յիշես անշուշտ , ազնիւ մտերիւնս , իբր գիւղի զաւակներ (դուն Մունճուսունցի , եւ Էվհրեկցի) իբր ծաղկահասակ պատանիներ , իբր վերջապէս սիրոյ ուխտաւորներ . . . որքա՛ն կը սիրեմք ծաղիկները որով մեր եղբայրական սիրոյն պէս անսրտս սպիտակութիւն եւ մեր արագեղ սիրոյն պէս ամօքիսած կարմրութիւն ունեցին : Որքա՛ն կը սիրեմք անտու եւ իրիկուն անունցիկ փունջեր կապեղ . անտուն՝ անունց արցունքը շոյեղու համար մեր յուզմունքով , իրիկունն ալ՝ անունց ժրպիտ խառնեղու համար մեր երջանիկ ձայները . . . եւ գիտե՛ս , որքա՛ն կը սրտեմք , երբ մին՝ իրիկունը իր անտուն արցունքով , միւսն ալ անտուն՝ իր իրիկուն ժպտովը կը խամրեին , առաջինը իր արցունքովը ժպտի կարօտ , երկրորդին ալ երջանկութիւնը խորշումներու մեջ կորսնուած . . . : Կը խամրեին , յիսն քանաստեղծութեանք մը կեանքի սխուր վերջանկարը պատկերացնելով մեր աչքին , վերջանկարը մեր արցունքին ու ժրպիտին , վերջանկարը մեր սիրոյն ալ գոր ալն ասեւն մեյնեկ հրեշտակներու նուիրած եմք , եւ իրարու կ'ըսեմք .

« Զի՞կայ արդեօք աշխարհիս վրայ ծաղիկ մը որ չքանակի իր արցունքովն ու ժպտով , ցորչափ յաւերի ժպտը մեր դեմքէն , արցունքը մեր աչքէն , սերը մեր արեւն . . . » :

Կ' ըստիմի և այդ ծաղիկը գտնելու համար կը
քայտառնենք յեռներ, դաշտերու ծաղիկները մեր
սենեակները կը փոխադրենք . . . որ մը վերջը
աղբիւսներու մէջ խառնելու համար անոնց դեղ-
նած քերթերը իրենց խամրած ժպիտովը, իրենց
ցընդած արցունքներովը . . . : Վերջապէս չեմիմ
կրնար գտնել . . . :

Բայց կան եղեր, անձնուկ'ր մտերիւն, քեր-
նջ քե ծաղիկ, այդ կոկոններ միշտ, անկեղծ մը-
տերմիդ արտէն ծած Կոկոններ, անցամաքէն յի-
շատակին ցոյժն մշտապէս կոկոններ, որոնք չեն
քառամիր եղեր ցորչափ չխամրի ժպիտը մեր դիմ-
քնն, սերը մեր արտէն . . . :

Ահա այդ Կոկոնները, հիմա, ազնիւ'ւ մտերիւն
Արգար, Քեզի, միմիայն Քեզի նուիրելու բաղդը
կունենայ

Քեզ կարօտող մտերիւն

Ե. Տ. Ե.



Կ'ըսեի՛նք եւ այդ ծաղիկը գտնելու համար կը
քայտառեի՛նք յեռներ , դաշտերու ծաղիկները մեր
սենեակները կը փոխադրեի՛նք . . . որ մը վերջը
աղբիւսներու մէջ խառնելու համար անոնց դեղ-
նած քերթերը իրենց խամրած ժպիտովը , իրենց
ցընդած արցունքներովը . . . : Վերջապէս չեի՛նք
կրնար գտնել . . . :

Բայց կան եղեր , անձնու՛կ'ը մտերիւնս , քեւ
ոչ քե ծաղիկ , այլ կոկոններ միշտ , անկեղծ մը-
տերմիդ արտէն ծած Կոկոններ , անցամաքէջի յի-
շատակին ցոյ՛հն մշտազեղ կոկոններ , որոնք չեն
քառամիր եղեր ցորչափ չխամրի ժպիտը մեր դիմ-
քեն , սերը մեր արտէն . . . :

Ահա այդ Կոկոնները , հիմա , ազնի՛ւ մտերիւն
Արգար , Քեզի , միմիայն Քեզի նուիրելու բաղդը
կունենայ

Քեզ կարօտող մտերիւնդ

Ե. Տ. Ե.



ԿՈԿՈՆՆԵՐ



ՅՕՂՆ Ի ՎԱՐԴԻՆ



Նրփնափողփող
 է՞ր այդ ցօղ
քերքերուն վրայ
 կ'երերայ ,
գեղահիւսակ
 'ի պըսա՞կ
գարդարել վարդ
 մեղմագուարք :

Կամ քե երկի՞ն
 ե քափած
մեջ իր զըրկին
 դեռաբաց՝
— քերքից բոսր
 մեղմօրօր
մեղմել պասու՛ք —
 ցօղ պաղուկ :

Կամ վարսագեղ
 կոյս շքեղ
 շաղովն աչա՞ց
 և բըրզած ,
 որ դիտե վարդ
 ցողազարդ
 մի՞տս սիրախանն
 ի նախանն . . . :

Ո՛չ , սիրավառ
 ոսկերեղ
 աստղերը վար
 են կարել ,
 երանաւէս
 քնով յաւէս ,
 ցոլ ցոլ թերթոց
 հարէ՛լ ծոց . . . :

Տպուած Ա. Մամլոյ մէջ

1897 Մայիս

Յ Ի Շ Ա Տ Ա Կ Մ Ը

Ամբան օր մ'եր , աղօթքանին հետ ժրպտուն
 Բացի աչքերս ես անմեղ ,
 Կը հմայուէի բուրբուրանի մը անհուն
 Հե՛տուրթինով արձագեղ :

Բայց այդ պահուն մի կեղեքում աններքեր ,
 Սիրսս հեշտօրեն . . . կը սանջեր ,
 Յիւեցի բէ երագիս մեջ ներս հետ
 Էի ամբողջ այն գիշեր :

— 'Ներս' որոնց շինական սունն էինք հիւր ,
 Եւ որ ինծի սարիւնը
 Վարդեն անուտ , երկչոտ քան նոյն իսկ զեփիւն
 Թըխտակ կոյս մ'եր աղւոր — :

Ու յիւեցի սակաւին բէ երագիս
 Մեջ ուզեց նէ կոպտօրեն
 Մի համբոյր իր կուրծքին վըրայ սեղմած գիս ,
 Համբոյր մը որ զլի իրեն :

Բայց խաբելով համբոյր գողցած էր ինէ ,
 « Մեր պարտեզէն ամեն բան
 Ծաղիկ , միրգ եւզ կուտամ , դուն ինձ , ըսաւ նէ ,
 Չե՞ս սար համբոյր մը միայն » :

Ու — երագիս մեջ — դեռ անփորձ մի զըզայ
 Յագած էի իր խօսքին . . .
 Մինչ այդ պահուն — արքննալու — ախամայ
 Կը գղջայի գայրագին :

Որոշում մ'երբ զլի խանդով առլըցուն
 Որոշում մը կուռ ու կոյր ,
 « Է՞ր հիմայ ես ալ իր այտէն երագուն
 Չի գողնայի մի համբոյր » :

Քսի մեղմիւ , վեր ցասկեցի անկողնէս
 Ու մօտեցայ ես իրեն ,
 Քրքիս սակեն քրքմընջելով համրի պէս ,
 « Տուր համբոյրիս փոխարեն » :

Իր մայրիկին մօտիկ խաղաղ կը նրնջեր ,
 Հրեշտակի մը պէս զուարթ ,
 Այսերն էին վառ վարդեր , իսկ իր աչեր
 Զոյգ չը բացուած կոկոն - վարդ :

Շրթունքներս կը ծկած մեղմիւ դեպ ի վար
 Ծըռեցայ նիւթդ այսին մօտ ,
 Յէ դող 'ի դող կոյս այսերեն վարդավառ
 Գողցայ համբոյր մ'աղմըկոս :

Ամբողջ սասը սարի անցած է այնքան
 Համբոյրէ մ'ի վեր վրսեմ ,
 Ու սակաւին շաքար կերած պէս մանկան
 Շրթունքներս կը լրզեմ . . . :

Կ Ե Ա Ն Ք Ը

Կերգեն սոխակներ երազուն շեշտով
 Վարդերու ծոցը հանգչած անվրդով ,
 Կերգեն երջանկին բաշխելով ժրպիտ ,
 Հեգին ալ սալով արցունք անվրնիտ . . . :

Կը գոռայ առուակն խորէն ձորերուն ,
 Կը սուրայ խամրած քերթերով հեռո՞ւն ,
 Կը գոռայ զուարթին նըչերով ցրնծուն . . .
 Կը սուրայ հեգին ցողովն աչերուն . . . :

Կը շողայ արեւն երկնից 'ի կասար
 Մարելով երկնից լոյսերն լուսավառ ,
 Մեկուն պարզելով դրախտ մը ցողաքոյր ,
 Միւսին ալ վիհ մը մուք ու մահաքոյր . . . :

Կարմրուակ վարդը կուսին կուրծքին վրայ
 Սիրահարներու շընչով կը քրքուայ ,
 Մեկուն բուրելով կեանք , հոգի ու սէր
 Միւսին ալ զալով սրտի խոր խոցեր . . . :

Եւ երբ համբոյրներ ու ժպիտ սիրային
 Ներս շըրթներէն սրտի մ'մէջ սահին ,
 Այդ սրտին մէջ վարդ կը ծլի ցողակաք
 Ուրիշ սրտի մ'մէջ փուշեր մըստխայթ . . . :

Այսպէս վայելով , ցաւով անհամար
 Վըճով ու խընդով շաղուած է աշխարհ ,
 Մին « ինչո՞ւ մեռնիլ » կը կրկնէ անհոգ ,
 Երբ միւսն ալ կըսէ , « է՞ր ապրիլ արդեօք » . . . :

Բայց երբոր մահուան ահաւոր նիւան ,
 Որդնայից շիրմին կը ցուցնէ համբան ,
 Փըպսելով կերթայ մարդը վըճահալ ,
 Երբ լալով կ'ուղղուի կենսապաշտըն ալ . . . :

1898 Յունվար

Ի Ն Զ Ո՞ Ի Ա Պ Ր Ի Լ

Բոցափայլ արշալոյսն երբ շիկնոս
 Ծաղկներուն փաղցրահոս ,
 Անուշակ կաթնուկներն կը կրթեր
 Վարդ ցոլփովն անհամբեր
 Անցընել եռանդոս արեգին
 Ծարաւր՝ սիրագին . . .
 Հառաչ մը կարելէր իմ սրտէն
 Փրթեցաւ ուժգնօրէն ,
 Զոյգ մ'արցունք ալ աչերս խառնեցին
 Ծաղկներուն կաթնուկին . . .
 Երբ մէյ մ'ալ յոյս հրեշտակն լուսադէմ
 Իր ժրպսով միշտ վրսեմ՝
 Կրկնաձայլ սուներներէ սել ու քաւ
 Իմ փոքր սրլացաւ ,
 Ու « Է՞ր ո՛վ պատանեակ , արցունքներդ
 Կը քոջեն ծաղկին քերք » ,
 Ըսաւ , երբ սրտիկիս խորերէն
 Հընչեցին քախձօրէն ,
 « Ուր պիտ' ծծեմ արփուոյն պէս իմ հասնող
 Սրտիկին կաթն ու ցող » :
 — Հոն ըսաւ եւ իր մասն հրալոյց
 « Երկինքը ինձ ցուցուց . . . :

Սեւասօղ , սասկորոս երկրնիին
 Տարափներն երբ ուժգին
 — Շանքի ու մահուն պէս երկնախուժ
 Արագոսն ու աշխուժ —
 Ամպերու ծոցէն մուք ու անծիր
 Կիջնէին ցան ու ցիր ,
 Կարմրափայլ կուսին պէս հարսնցու
 Ծաղիկներ հրնձելու ,
 Զարնելու քոչնոց պէս գնկահար
 Կոկոններ անգրաբար ,
 Եւ վայրի կոհակաց հետ քաղել
 Վրիերու մեջ անել . . .
 Մրսայոյզ եւ ես ալ միս միմակ
 Հովանուս ծառի մ'սակ
 Լացի' . . . երբ սարափին իսկ մեջէն
 Վազեց յոյսն հեւալէն ,
 Թեւաբաց վազեցի դեպ իր ծոց
 Փափուկ ու շիկաբոց ,
 Եւ ըսի , « ո՛ւր գրսնել միշտ պայծառ
 Ու անամպ մի կամար » . . .
 — Հոն « ըսաւ » եւ իր մաս հրբալոյց
 Երկինքը ինձ ցուցուց . . . :

•
•

Երբ դժբաղդ պասանին ւրսայոյզ
 — Ցաւերու մեջ 'ի սոյզ —
 Թափառեր շիրմի մ'սեւ փառերուն
 Մեջ ֆայլով մ'երերուն ,

— Տեսնել գէթ սիրուհւոյն սիրական
 Թափառկոս ուրուական ,
 Ու ներկել սեւ ցօղով շիրմին ցուրս
 Հողերը անյագուրդ —
 Եւ անցաւ յուսախափ գրեաց ալ
 Իր վրճին մեջ մոռնալ
 Երջանիկ ժամերը իր կեանքին
 Վայրկեաններն իր անգին . . .

Սրբբեցի իմ աչքս՝ արժասուլաց
 Շիթերով քրջուած ,
 Տեսնելով յոյսը որ շուտափայլ
 Կը փութար դէպ ինձ գալ ,
 Գոչեցի , « ո՞ւր գրանել , յոյս փաղցրիկ ,
 Սէր մը միտս երջանիկ » . . . :

— Հոն « ըսաւ » եւ իր մաս հըրապոյց
 Երկինքը ինձ ցուցուց . . . :

* * *

« Հո՛ն , միտս հո՛ն , երբ սրտի պապական
 Յօղն հոն է անկասկած ,
 Երբ վաղորս ծաղկներուն խուռներաւ
 Հոն է կեանքն անբառամ ,
 Մաշտոյին ալ հոն են օրերն միտս
 Երջանիկ ու անմիտս . . .

Է՞ր ապրիլ հոս բոցի մեջ անձեզ
 Տարափի սակ անվերջ ,
 Երկրի դառն ու մաշող վրճերուն
 Գառնուրեանց մեջ զեռուն . . . » :

Եւ հրեւոսակն դայլայլով մը ազու ,
 — « Յիշատակ գրեւո՛ւ
 Հոն » ըսաւ եւ իր մաս հրաւրուց
 ձիւս երկինքն ինձ ցուցուց . . . :
 1898 Մարտ

Ա Ռ Ա Մ Պ Ի Կ Ն

Գրնացքին պէս մուխին ցանցաւ
 Զոր կը շքնէ աչքով սիկաւ ,
 Ծանր ծանր աննրպատակ
 Կ'երթաւ անգէս թէ ո՞ւր շիտակ :

Եւ մայրուն իբր թիթեւ ,
 Կը չափչրփես անհունն երէր ,
 Մեր կ'անհետիս ապա նորէն
 Կ'երեւիս դու նըւազօրէն :

Այրով սրտի մը հեւքին պէս
 Դեպ անհունը կը խուհապէս ,
 Ու ծանր ծանր աննրպատակ
 Կ'երթաւ անգէս թէ ո՞ւր շիտակ . . . :

Ու պէկո՞ծ փրփուրի նման
 Քիչ քիչ կ'հալիս որքան գաւ ման ,
 Սիրահարի մ'հառաչներուն
 Խո՞ւնկն եւ արդեօք, ամպի՛կ քրքուն . . . :

1898 Ապրիլ

14666-88 (1001 / 792)



Գ Ի Շ Ե Ր Ը Մ Ի Ն Ա Կ

Ա.Ռ. ՆԵ:

Աչերդ էին որ լոյս զբերին արփուոյն
 Փայլիլ երկնից մեջ ցոլնով շողշողուն ,
 Աչերդ էին որ մարեցին խապառ
 Երկնից նրազներն , լոյսերը պայծառ :

Հիմայ երբ հանգչած են ցոլն աչերուդ
 Լերանց ետեր պահուած արփին մութ ,
 Կուլա՛յ , եւ առտուն կելլէ նա կրկին
 Մբեղով արցունքն արիւնոս աչփին :

Հիմայ երբ աչերդ այն աղու հայեաց
 Չեն մըքընցըներ լոյսերն հրապրեաց ,
 Փակ աչդ կը դիտեն երկնից խորերէն ,
 Բայց մարի՛լ կուզեն աչփդ մեջ հրեղէն . . . :

Այն աղեղ յօնֆերդ սեւ ու նրբագիծ
 Մարեցին հրալիքն — գիսաւորներն — երկնից,
 Եւ հիմայ երբ են վարսիդ սակ թաղուեր
 Խոյս կուտան աշխոյժ գիսաւորք ի վեր :

Կարմիր բաժակեդ ձօնեցիր , գիտե՛մ ,
 Անխօս սոխակին մեղեդի վրսեմ ,
 Եւ հիմայ երբոր լըռած են շրթներդ
 Չը յուզուիր այլ եւս վարդին կարմուկ թերք :

Անու՛ւ՛ւ՛ւ՛ւ՛ւ՛ կ ժրպսովդ ինձ ալ կեանք սըւիր ,
 ժրպիս որ կ'վառեք աչքերդ լուսալիր ,
 Իսկ հիմայ երբ դեմս , ո' կոյս անըման
 Ձես ժպիր, կըզգամ սարսուռը մահուան. . . . :

1898 Մայիս

Մ Ե Ր Ժ Ո Ւ Մ

Տեսայ քեզի սրբավայրի մ'մեջ շրջեղ ,
 Որու դրժխոյն էիր դու ,
 Տեսայ փքրում մ'անկեղծ սիրոյ արագեղ
 Նայուածքիդ մեջ այն աղու ,
 Եւ բողոցի որ սրտիկըս իմ անմեղ
 Լողայ մեջ հե՛տ յոյսերու . . . :

Մըսիկ քրի հիացումով մ'անխորհուրդ
 Քու անու՛ւ՛ւ՛ւ՛ կ խի՛նդդ ու ձայն ,
 Ու երբ խանդով սրկեցիր դու բոց ու հուրդ
 Սըրտիս մեջը ցիր եւ ցան ,
 Թողուցի որ սըրտիս մեջը՝ փաղցրաւորք
 Բերնեղ ցողեր քող սեղան :

Երգեցի զքեզ երբ երգդ ու պար խառնեցիր
 Սոխակներու երգին հետ ,
 Երգեցի քեզ , շքուննդ ու աչքդ լուսածիր
 Վարսիդ փունջը վե՛ս 'ի վե՛ս ,
 Թողուցի որ երագի մեջ անձանձիր
 Թաղուած յի՛ւեմ քեզ յաւե՛ս . . . :

Ժրպսեցայ քեզ երբ ժրպիսներդ ծալ 'ի ծալ
 Տեսայ դեմքիդ վրայ վեա ,
 եւ յուսալով սիրել , սիրուիլ ու պանծալ ,
 Ծաղկահանգչիկ բիրձան պեա ,
 Քողուցի որ սիրածարաւ սիրքս ալ
 Կախարդի մը պեա թովեա . . . :

եւ թովեցի՛ր , գերին եղայ քու սիրուդ ,
 Գերիդ քրի սերս ու քնար ,
 Յուզմամբ տեսայ աչերուդ մեջ այն շողուս
 Կարած արցունք մ'իկնձ համար ,
 Ու պաշտեցի , երբ դուն քսիր ինձ , անգո՛ւք ,
 « Ո՞վ ես , ես քեզ չեմ հանչնար » . . . :

*
* * *

Մոռցա՛ր այն արցունքդ որ ինձի համար
 Լուսածիր աչքեդ մեղմիւ հոսեցան ,
 Ինձ համար կրկնած խօսքերդ մոռցա՛ր ,
 « Լքած չըլլայիք իր անուշիկ ձայն » . . . :

Ուրացա՛ր այսպեա , ո՛վ աղջիկ անգուք ,
 Իմ հառաչս ու սեր , քու ժպիսդ ու արցունք ,
 Ի՞նչ ընեմ հիմայ քեզ , քանի օգուս
 Չունեցան հառաչս , ու սերքս խորունկ . . . :

Անիծե՛մ հիմայ այն անունդ սիրուն
 Չոր կը կրկնէի ասեմ մ'հոգեպիտ ,
 . . . Բայց ո՛չ , չեմ կրնար , զի քու քաղցր անուն
 Պահիկ մը « Կեանք » իս եղաւ հումանիտ :

Անիծե՞մ նայուածեդ այն պատրուդ ու չար ,
 Որ բացաւ արիս սակ վերեւ գրանձ ,
 . . . Կուզեմ անիծել , սակայն չեմ կրնար ,
 Զի պահ մ'երջանիկ կեանքն ինձ սրաւ ցոյց . . . :

Անիծե՞մ արդեօք սիրքդ արագրաւ ,
 Որ անփորձ սիրքս կախարդեց գերեց . . .
 . . . Զեմ կրնար զի սիրդ արիս մեջ դրաւ
 Քու յիշատակը . . . լիրբ ու աներես . . . :

18 Յուլիս 1898

Բ Ա Ղ Ե Ղ Ն Ա Ռ Մ Ա Ն Ի Շ Ա Կ

Երբ արեւին մի գով շառայլ

Պատեց բանիս սեւ մըռայլ ,

Եւ առաջին ցօղի կաքիլ

Թըրջեց բերքիկս նորածիլ ,

Քու ֆողքիկ հոս

Այն սրսոս

Զարկաւ սրսես

Նեսի պես ,

Այն օր բզգացի սեր մը անուշակ ,

Բայց արդեօք ինչո՞ւ Տերն , ո՛վ մանիշակ

Քեզ ինձ պես երկար հասակ չե՞ սրւեր

Մեկտեղ փաթթըւած սուրալու դեպ վեր :

— « Անուշես քեզի պես

Սիրահար մը վէս՝

Զըրկելի՞ւ բոյրես » . . . :

1899 Մայիս

Ս Ի Ր Ո Յ Ծ Ա Ղ Ի Կ Ը

Ա.

Վարդակարմիր իր բերան
 Շաղ ու բոյրի բոյն մըն էր ,
 Ծաղիկներու ալ օրբան
 Էր իր կուրծքը սրբասէր ,
 Ծիծառնիկ մ'էր ոսոսունն ,
 Սոխակ մ'էր էն ծաղկայեց ,
 Երգիչն էր նէ նրկարուն
 Ծաղիկներուն . . . երբ սիրեց :

Սիրեց , սերը — մի մեղու —
 Հիւրընկալեց մեջ սրբին ,
 Որ կամ պիտի մահասու
 Զարնէր հարուած մը ուժգին ,
 Կամ — քաղցր մեղրով — սրտաքինդ
 Երագներով պիտի սար
 Վայելել սէր , ժրպիտ , խինդ
 — Երագք կուսին սիրահար — :

Սիրեց մի որք զղամարդ
 Որ իրեն պէս միս մինակ ,
 Կը քափառէր դաժտ ու արտ ,
 Մենաբուսիկ նոնեաց սակ ,
 Սիրեց զի բաղդն իրեն պէս
 Անոր մօտ սերն հետ սարաւ ,
 Զի' երկուքին ալ երես
 Մօր համբոյրին ունէր ծարաւ . . . :

Բ.

Տարի մ'անցած էր ներս
 Հառաչներով արտաւեր ,
 Բայց իր այն վարդ այսին վրայ
 Փորելով մի զոյգ վրհեր ,
 Աչերն ինկած անյասակ
 Փոսի մը մէջ խորասուեր ,
 Իր սիրահալ կուրծփն սակ
 Կեանք մահուն հետ կը կռուեր :

Ճիւղի մը պէս կրքնած
 Ուռիի մը արմատին
 Գըլուխն հակած դէպ 'ի ցած
 Կը դիտէր մի փշ անդին ,
 Մի նոնրնդմէջ ուր մի մարդ
 Ծընրադրած էր մէջ ձեռփն
 Ծածկած աչերն ցողազարդ ,
 Ան էր սիրած պասանին :

Մի փշ ետք հոն էր են
 Երբ պասանին արսայոյգ
 Գընաց աչերն սրբելէն ,
 Հոն նէ տեսաւ մի պոմպոզ
 Որ միսմինակ — իրեն պէս —
 Հոն մաշելու էր փշուած ,
 Ու հեգ ծաղիկ մ'էր կարծես
 Ս. Եղեմէն վրտարուած . . . :

Ըսաւ , « Պոմպոզ մենասեր
 Խաչին ծանրը սակ բեռան
 Քեզ իր նակսեն արսկեց Տեր (*)
 Որպէս զի որքն որ միայն
 Կրզգայ սփոփ երբ իր արցունք
 Խառնէ որքի մ'արցունքին
 Գայ ու վրժսովն իր խորունկ
 Օրրէ քերթերդ սրճմագին » . . . :

Ըսաւ , լացաւ անբսփոփ ,
 Յետոյ արբեց իր ծաւի
 Աչկերն ու իր քրջած կոպ ,
 Եւ հառաչեց իւրովի ,
 « Եթէ մեռնիմ հոս սեղ թող
 Զիս շրպրոսեն , զի անգե՛ս'
 Գուցէ վրաս շիք մ'աչացող
 Թափէ պոմպոզ ծաղկին հետ » . . . :

Պ.

Շաբար մ'հազիւ անցած էր ,
 Երբ պարելով մի երգ թաւ ,
 Դիաքաղը կոճ ու ծեր
 Իր բանը հիւզդ հոն զարկաւ ,

(*) Կ'աւանդուի թէ Յիսուս խաչի ծանրութեան սակ յոգ-
 նած ու ֆրճած՝ ստիպուեցաւ խաչը գետինը դնել մի ֆիչ , եւ
 արսկել իր ֆրճինքն ի գետին , եւ անա մէն մի պուսն իր ֆր-
 ճինքն մի պոմպոզ [նկիրուզ չիչէյի] կրկայ , պոմպոզ որ Ապ-
 շիլին մօտերը կը բացուի ձիւնձաղիկէն տէր :

Ու պահիկ մը ետք երկրի
 Վրնին մեջ՝ դեռ արտադող
 . . . Քարկոծեցին մի հուրի
 Անյիշատակ մի սիրող . . . :

Ու պատանին այն օրն ալ
 Եկած էր իւր սիրագուրք
 Հօրն ու մօրկան վրայ լալ
 Երբ տեսաւ մի հողակոյս ,
 Ըսաւ « հոս տեղ անպատան
 Քարկոծած են մի որբուկ . . .
 Որբուկ մ'անտէր ու բռուտ
 Որ կը սիրէ մի արտուխ » :

Ըսաւ , յուզուած պատանին
 Շիրմին վրայ՝ ընդերկար
 Իր անծանօթ սիրողին
 Քափեց արցունիք անհամար . . .
 . . . Յաջորդ առտուն մի պոմպոզ
 Ծընաւ ծըլաւ ցողազարդ ,
 Պոմպոզներու սիրահոս
 Արտիկին պէս անաղաւթ . . . :

1899 Յունիս

Ք Ս Ա Ն Է Ն Ա Ռ Ա Ջ

Քրսանէն առաջ կեանքս ի՛նչ անուշ էր ,
 Երբ սիրոյ երազն ցերեկ ու գիշեր ,
 Նոր ժրպիտ, նոր խիւղի, նոր օր, նոր սարսուռ
 Խանդավառ արտիս մեջը կը զեղուր :

Հիմայ — քանի՛ն մեջ — ի՞նչ դառն են օրեր,
 Երբ ապագային նայուածք արտաւեր ,
 Նոր ցաւերու գոյժն ինձ կուտան անդուլ ,
 Կապառնան նոր վերք արտիս մեջ լընուլ . . . :

Քրսանէն առաջ սիրսս բուրասան մ'եր ,
 Որ ներա քրքուռն ժպտով կը ծաղկեր ,
 Կուրծքս ալ բաժակ մ'եր դեռաբաց բաժակ ,
 Որ կուռեր էնոր շրնչովն անուշակ :

Հիմայ , քանի՛ն մեջ , սիրսս է մի հրնոց ,
 Ուր կը բորբոքին մաշող հուր մ' ու բոց,
 Որք ծաղկաբառամ խորշակներու պէս ,
 Կը խամրեցընեն իմ սիրսն ու երես . . . :

Քրսանէն առաջ սիրքս սիրաթոյր ,
 Յորանն էր սիրոյ , սիրոյ խընկաթոյր ,
 Սիրոյ որուն հետք օրօրներն էին
 Ներա սուրբ շունչը , ժրպիտն խանդագին :

Հիմայ — փանին մեջ — սիրոյ մ'ե շիրիմ
Սիրսս՝ ուր չոր ծաղկին պես որ թռուառի մ'
Տապանին վրայ սրիսուր կերերայ
Դեւ մը կօրօռուի . . . յիշատակ ներա . . . :

Քրսանեն առաջ երբ ծագեր արեւ
Նոր երազ կը ծներ իմ արսին վերեւ ,
Ու երբ լուսնակը ինձի կը ժպտեր
Ծիլ ծիլ կը վառեր արսիս մեջը սեր :

Հիմայ — փանին մեջ — արեւն երկընքի
Շաղովն ու ցօղով դարձեայ կը ծագի ,
Բայց մոռացումի շեռս մ'անոր սալով
Երբ ինձ կը բերէ հառաչ մը թոթով . . . :

1899 *Դեկտեմբեր*

Ո՛Վ ԱՍՏՈՒԱԾ

Կրսեն ֆեզի համար , Տեր
Թե դուն կուսաս ամեն բան ,
Թե կ'դարմանես սեւ վրսեր ,
Թե դժբաղդին ես պաշտպան ,
Ինչո՞ւ համար բայց , ո՛վ Տեր ,
Ես չեմ տեսներ քու բարիք ,
Է՛ր արսիս մեջ չը կարեր ,
Բարիքներուդ շողն փոքրիկ . . .

Քու բարիքեդ քանկագին
 Ես արցունքներ կը բափեմ,
 Հառաչովս ալ բախձագին
 Մօս է փրկչել ժամուն բեմ,
 Ու անձանձիր՝ սակաւին
 Բարիքներովդ անյասակ
 Կը ձանձրացնես լիովին
 Մարդը՝ լալու անգիտակ . . .
 Բնութեան պէս որ Սահարան
 Զըրկած շիքէ մ'կենսասու,
 Իր գետերը բիւրբերան
 Ովկիանին մեջ կը հեղու . . . :
 Կըսեն քէ դու միշտ կ'օրհնես
 Երկրագուռ ծառաներդ .
 Թէ միշտ կուտաս մարդոց հեզ
 Խինդ ու ժրպիտ քերք ի քերք,
 Արդ է՞ր անունդ էս կուտամ
 Օրը բիւր հեղ, ու դուն ինձ
 Չես ըսեր գէթ մի անգամ
 Թէ, « հե՛զ սրղայ, ի՞նչ ունիս » . . . :
 Եթ' հառաչս է քու գեփիւռ
 Միտք տուր ինձ որ հառաչեմ,
 Լալու ալ ինձ արցունք տուր,
 Եթ' արցունքդ է ցողդ նրսեմ . . .
 Զի գոչելէն « ով Ասուած »
 Ալ իմ սիրքս կը մըլխայ,
 Արցունքն աչքես է խոյս տուած,
 Ու դեռ չըսիր, « հե՛զ սրղայ » . . . :

Կրսեն թէ դու չարերուն
 Հանդէպ դրժոխք մ'ես դաժան ,
 Թէ անկրօնին դեմ անհուն
 Պատիժ մըն էս անբաժան . . .
 Արդ եթէ քեզ նախասինք
 Եմ , մի շանթով զարկ սրբես ,
 Որ երկուքս ալ . . . ազատինք ,
 Եթէ ոչ ձայնդ կուզեմ էս ,
 Որպէս զի երբ մի այլ ոք
 Եինդով գիրնայ յարածամ
 Ես վրժի մեջ դառնահոգ
 Կեանքի ցաւը չորոնամ . . . :

Կրսեն թէ դու երկրի վրան
 Խոնարհ ըլլալ ուսուցիր ,
 Հապա ինչո՞ւ դո՛ւ այնքան
 Անհունութեան այն անծիր
 Բարձունքներն էս բոյն դրբեր ,
 Որպէս զի ինձ պէս հեզին
 Մըտիկ չընե՞ս սրտաւեր
 Հառաչները թախծագին . . . :
 — Գուցէ երկնուց վրտարուած
 Սասան մ'ըլլամ . . . բայց ինչո՞ւ
 Չեմ լսեր իր սասն ու հարուած
 Վրժերունս մեջ մահասու . . . : —
 Ո՛չ , ո՛չ , ցաւերս վրկա՛յ , դուն դեռ
 Թեեւ տերն էս աշխարհին ,
 Բայց մարդուն կեանք չես գիտեր

Քան սառապեալ պատանին ,
 Ու . . . սորվելու համար գեթ
 Կեանքն ու ցաւը աշխարհիս ,
 Խոնարհ իջիր բարձունքէդ
 Ըսէ , « սրղա՛յ , ի՞նչ ունիս » . . . :

1900 Յունիս

Մ Ր Մ Ո Ւ Ն Ջ Ն Ե Ր

Տեղ մը կասղած իբր անեղ
 Մի հեղեղ ,
 Արցունքի մի երկար գետ
 Կը ժայթքես :

Բայց այդ արցունքդ ականակիտ
 Հոսանքիդ
 Կը խառնըւին եւ դուն կուլ
 Կուտաս ի՞նչ . . . :

Դարձեալ հոն տեղ քու բափով
 Ա՛նձըրը՛ձ
 Քու ծոցիկըդ նիւթ ինձ պես
 Կը կըրծես . . . :

Եւ հառաչիդ փրփուրներ
 Կուրծքէդ վեր
 Կը ժայթփին միշտ ու կրկին
 Ծոցդ կրնկնին . . . :

Եւ կրեղով քեզ մաշող
 Բոցդ ու շող ,
 Քու արտկրդ կը խոցէս ,
 Սիրոյս պէս . . . :

•
 •

Աստին մօտ իմ սենեկին ,
 Անմեկին
 Մըրմունջներովդ հետ արիս
 Կը խօսիս :

Եւ մանրկեկ պէտակներդ
 Շերս 'ի շերս
 Կը շարես միշտ սասափեայ
 Գեմփիդ վրայ . . . :

Հոս արսաբուղիս հառաչներդ
 Փերք 'ի փերք ,
 Գառն արցունքներդ կը շոյեն
 Մեղմօրէն . . . :

Եւ սանելով մեզ հոսանքիդ
 Այն ՀԸՏԻ՞ր

Մրտեղ հողի մի փրշուր
Չիյտեմ ո՛ւր . . . :

Կը սահիս միշտ ծոցիդ մեջ
Մշտագեղ
Խոր մրմունջով , յաւիտեան
Յուշիս նման . . . :

1900 Յուլիս

Ա Ն Ծ Ա Ն Օ Յ Ո Ւ Շ Ի Ն

Պատուհանի մ'եսին կանգնած անհանդարտ ,
Կը յածէիր չորս դին աչերդ այն անթարթ ,
Անտարբեր որ անցորդները եսասեր
Հիացման մեջ իրենց ուղին են մոռցեր :

Պատուհանին էտին կանգնած՝ կուրծքեդ վեր
Լիալուսին մ'էիր կարծես բոցաներ ,
Որ նրւադկոտ իր շրթներէն հազիւ քէ
Հորիզոնին իր համբոյրներ կը կաթէ . . . :

Կամ դիցուհւոյ մը կիսարձանն էիր դու
Որ դիւային իր նայուածով միշտ աղու
Տանարի մը անմասշէլի խորերէն
Խանդոտ աչերն կը ձգձրգէ դեպ իրեն :

Ձեռներդ յենած պասուհանին փւերուն
Աչներդ մերք մօտ կը յածէիր մերք հեռուն ,
Ըսի մտեա . « Ինչքան սիրուն է սա կոյս » ,
Երբ նոյն պահուն աչդ դարձուցիր դեպ իմ կոյս :

Տեսայ աչներդ որոնք կարծես մերժուած
Սիրոյ նըւաղ նրագներն էին ամօթխած ,
Տեսայ դէմքդ ալ որ նըւաղկոտ նըրագիմ՝
Փայլով տեսնուած կարծես նըկար մ'եր անգին . . . :

Այո՛ , տեսայ աչներդ սրխուր երկնային
Ու կարծելով կարդալ իմ կեանք սիրային ,
Ըսի , « Պատշէլ կուզեմ աչներն այն սրխուր ,
Երբ « Յն » սուլեց կառախմբին ձայնը սուր :

•
•

Հիմայ — որ քեզ արի մ'է որ չեմ տես —
Երբ դիտելով փուկիկիդ պես նուաղ աչեր
Սիրել ուզեմ , կարծես ակրնջիս մեջ է
Կառախմբին սուր ձայնը դեռ կը հնչէ . . . :

1900 Օգոստոս

Ի Մ Ք Ն Ա Ր Ս

Յրբոր սերը արհիս վրայ գերդ քիթեռ
 Քառած իր հիւք կը կըքէր
 Հե՛տ մի խայրով . . . ձեռքս առի իմ քնար
 Երգեցի սերն անդադար :

Նւ երբ օր մ'ալ արհիս վրայ ըզգացի
 Մերժուած սիրոյ ազացի ,
 Չեռքս առի քնարս ուր ինձ հետ լացաւ
 Յիշատակը դառն ու սեաւ . . . :

Օր մ'ալ բաղդը — զոր կանուանեն նահիւ գիր —
 Նետեց օսար մի երկիր ,
 Հիմայ նորէն սիրոյ յուշեր իմին սիրս
 Հառաչներով սանջեն բիրս . . .
 Կուգեմ երգել իմ քնարովս ոսկեքել
 Ու սիրքս ցօղ մը կարել . . . :

Ու կարօտով կըսեմ , « սրւեք իմ քնար ,
 Ընկերն հոգւոյս սիրավառ
 Բայց կըսեն ինձ վարժապետ ես , ով սրղայ ,
 Ու կուտան ձեռքս մի ծննդայ . . . :

« Վարժապետ ես , կրսեն ինձի , վարժապետ
 Չունենաս քնար իրեն հետ ,
 Թե՛ իր քաղաքն ըլլայ թե՛ գիւղ մը օտար ,
 Պէտք չէ ամէլ ալ կիրառ :

Ըսին , գողցան երգը արժիս վրժարեկ
 Երգը հարակ արժիս հեզ ,
 Ըսին , առի՛ն ձեռքս քնարս քաղցրերգակ
 Վիհ մը բացին արժիս սակ . . . :

Ուզեցին որ վարժապետը մի անեզ
 Մաշի՛ հուր ու բոցի մեջ ,
 Փափաքեցան որ ըզգայուն անոր սիրտ ,
 Յաւի շիշին քամէ դիրտ :

Ուզեցին որ սիրտըս մըխայ զերդ բուրվառ
 Ու իբր պղինձ դողայ յար ,
 Տալով երգի ու քնարին իմ փոխան ,
 « Փառք ՚ի բարձունս »ն ու ծննդա . . . :

Երբոր ըսի , թէ « մին չէ երգն իմ արժին ,
 Դա մի մաղթանք է ցրտին » ,
 Թէ « միւսն ալ չէ իմ քնարըս հարազատ »
 Զիս կոչեցին « անհաւատ » . . . :

Երբ ըսի թէ , « Երգով կապրի մարդ՝ աներկ
 Կեանքն ալ արդէն է ողբերգ »
 Էլքսողները որոտացին կոտ ձայնով
 Թէ « վարժապետն է գիւղով » . . . :

Երբ վերջապէս ես աննարակ բացի խուն
 Շրքթունես երգով ողողուն
 Ունկընդիրներն ըսին ծաղրով ինձ համար ,
 Թէ « վարժապետն է յիմար » . . . :

Ինչո՞ւ ուրեմն , ո՛վ Տէր , արժիս տուիր երգին
 Ճաշակն ու սէր խանդազին ,
 Ինչո՞ւ ըսիր , զխուր արտիդ մըխիթար
 Լոկ երգելն է անդադար :

Եթ՛ « վարժապետ » զբրած էիր իմ հակաս ,
 Ինչո՞ւ քնարն շողակար
 Տըւիր ձեռքս , ըսիր , « անա քու ընկեր ,
 Որ ըստփանես միտս լինէր . . . :

Կեանք չէ այս կեանք , այլ հիւժուժք այն նաւին
 Որուն տէր ծոյլ հիմնովին ,
 Զինք կը բողու ծովին 'ի տես անվրդով
 Մաշի՛լ ալեաց կարօտով . . . :

« վարժապետին , կըսեն , պէտք չէ քնար , երգ ,
 Գարմանել իր արտի վերք ,
 Ալ ի՞նչ մընաց քէ ոչ անեծք , հայհոյանք
 Ժայթփել կեանքին դառնայանգ . . . :

Անեծք այո՛ , ու հայհոյանք ժայթփել յար ,
 Այս կեանքին դէմ դալկահար ,
 Բայց ո՛հ , անեծքն ալ չեն ուզեր ինձի տալ ,
 Գուցէ զի շեշտ մ'ունի՛ր այն ալ . . . :

1900 Նոյեմբեր

Ի Ն Զ Ո՞ Ի Յ ՈՒ Ս Ա Լ

ԱՌ ՔՈՒՐԻԿՍ Ս. Ե.

Կրսես ինձ , « հազիւ էիր վեց տարու ,
 Երբ եղբայրդ զընաց փաղափ մը հեռու » ,
 « Մայրիկ , ե՞րբ պիտ' գայ » երբ հարցընեմ քեզ ,
 Միտս « գալ տարի » ինձ կը պատասխանես ,
 Իսկ հիմայ երեք դանդաղ տարիներ
 Սահեցան գացիկն չեկաւ անի դեռ :

« Խօսե՛ , իմ մայրիկ , լըռելդ ալ հերիփ ,
 Դեռ ե՞րբ պիտի գայ եղբայրս փաղցրիկ ,
 Անոր կարօտը իբրեւ անկուտոս ցեց
 Հերիփ է որ սիրս անգործն կրծեց ,
 Զի երկար երեք դանդաղ տարիներ
 Աղեկ , գեշ գացի չեկաւ անի դեռ » :

— Սիրասուն աղջիկս , ալ մի՛ ըներ հոգ
 Գաղբեցուր արցունեդ , սրտիդ ալ մտմտ ,
 Ռեքան որ փղձկիս ու արցունք քափես
 Աչքերս կը լեցունին աղբեր գուռին պես ,
 Երկու տարիէն եղբայրդ հըսկայ
 Մ'եղած կարօտով մեզի պիտի գայ » :

« Ո՛հ , ինչպէ՞ս չըլլամ , երբ եղբայրս ազնիւ
 Այտերս համբուրեց մի խանդոտ ձայնիւ ,

Եւ յաջորդ սարին այտերս կրկին
Պագնելու ուխտով նսաւ մեջ կառփին ,
Հիմայ որ երեք դանդաղ սարիներ ,
Անցան ու գացին շեկաւ անի դեռ » :

« Բան մը կը յիշեմ , մայրիկ իմ անուշ ,
Երբ ան կը պագներ այտերս քնուշ ,
Այնքան լացի որ զինքն ալ ինձի հետ
Ստիպեցի քափել արցունք դառնադէտ ,
Արդեօք զինք այդպէս լացնելու համար
Երեք սարիէ 'ի վեր չը դառնար » :

« Եթէ այդպէս է գրեք իրեն շուտ
Թէ զինք լացնելու չափ չեմ ալ անգութ . . . »
— Լա՛ւ . . . գրեմ , աղջիկս . . . որ անսարակոյս
Երկու սարիէն թող դառնայ մեր կոյս ,
Գրեմ անպատճառ որ կտրին հրակայ
Մ'եղած կարօտով մեր տունը թող գայ :

— Երեք սարիներ յոյսին շընորհիւ
Ըստասեցինք մենք եղբայրդ ազնիւ ,
Երկու սարին ալ այն յոյսով նորէն
— Ետին վայելով — կանցնի հե՛տօրէն . . .
Թող օրհնեալ ըլլայ Աստուածն Երկնքին
Որ մեզի շնորհեց այդ յոյսը անզին . . . :

« Ահա այն երկու սարին ալ անցաւ ,
 Առանց սանելու մեր կարօսն ու ցաւ ,
 Հերիք է որ ալ սուսերովդ խաբես ,
 Սիրսս ալ կը մըխայ քոջած փայտի պէս ,
 Ահա եկաւ ու կ'անցնի այս գարուն ,
 Դեռ ե՞րբ պիտի գայ եղբայրս սիրուն :

« Կուլա՞ս , ով մայրիկ . . . բայց չիյսեմ ինչո՞ւ
 Սիրսս կը ծակծրկեն արցունքներդ կրծու . . .
 Զըլլայ որ դուն ալ մինակ բողով զիս ,
 Լացնելուս համար եղբօրս պէս փախչիս ,
 Բայց ահա եկաւ , կանցնի այս գարուն ,
 Դեռ երբ պիտի գայ եղբայրս սիրուն » :

— Մի՛ վախնար , աղջիկս . . . Բեզմէ չեմ գասուիր . . .
 Ես եղբօրդ պէս . . . չեմ անկարեկիր . . .
 Բայց կաղաչեմ ալ . . . եղբայրդ . . . մի յիշեր ,
 Մի՛ գբաղիր անով . . . ցերեկ ու գիշեր . . .
 Զի հիմայ ալ ինձ . . . մեզի կարօսով
 Կըսպասէ երկինձ . . . հրեշտակներու ֆով . . . » :

« Ի՞նչ կըսես , մայրիկ , եղբայրս մեռա՞ւ . . .
 Յընդեցաւ իսպառ մեր յոյսն անգրբաւ . . .
 . . . Անգուժ երկինքը եթէ իմ եղբայր
 Պիտի շուս գողնար այսպէս անգթաբար ,
 Ինչո՞ւ յոյս սըւաւ մերին արտերու ,
 — Յուսախաբութեանց վըրայ ժըպտել՛ւ . . . »

1901 Փետրվար

Ե Ր Ե Ք Զ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ Ն Ե Ր

Ի՛ր հօր մօր կարօս Դպրաստունն անցուց
 ժամերն ուսման
 Այն անսահման ,
 Ուր մի հանելուկ գրքաւ ան վաղուց ,
 « Դա՞նն է կարօս ,
 Թէ քաղցրահոս . . . » :

« Դա՞նն » ըսաւ , բայց է՞ր դարձեն ետ իրկուն՝
 Կարօս մընալ
 Կուզէր դարձեալ . . .

« Քաղցր » ըսաւ , սակայն դըպրոցը՝ այգուն՝
 Երբ երթար չէ՞ր
 Որ կ'հառաչէր . . . :

. . .

Երջանիկ սիրով անցուց պահ մը զուարթ
 Յիշատակին
 Մէջը գրկին ,
 Երբ հանելուկ մ'ալ գրքաւ դառնաւարս
 « Դա՞նն թէ անուշ
 է սիրոյ յուշ . . . » :

Եթէ « Դա՞նն » ըսէր մարդ էր կը սիրէր
 Յիշել անցեալ
 Յիշել դարձեալ . . .

Իսկ եթէ « անուշ » սիրսն անհանդարս է՞ր
 Կ'հառաչէր արդ
 Երբ յիշէր մարդ . . . :

•
•

Կրեց , վայլեց ցաւն ու խիւղն աշխարհին
 Ալ մօտեցած
 Էր շիրմին ցած ,
 Երբ հոն հանելուկ մ'ալ գրտաւ վերջին ,
 « Անո՞ւշ է կեանք
 Թէ դառնայանգ » . . . :

Եթէ « դառն » վրճուէր ինչո՞ւ կուգէր դեռ
 Ապրիլ կեանքին
 Մէջը գրկին .

Իսկ եթէ « անուշ » միթէ — չէր գիտէր —
 Է՞ր ապա յար
 Մեռնիլ կըղձար . . . :

•
•

Այսպէս խեղն մարդը « քաղցր դառն » ի անհուն
 Հանելուկին
 Մէջը գրկին

Ծընաւ ու մեծցաւ եւ քաղէր զինք նոյն
 Հանելուկին
 Մէջը կըրկին . . . :

1901 Ապրիլ

Փ Ո Շ Ա Յ Ի Մ Ը Վ Ի Շ Տ Ը

Փառքած զանգուած մը ձորձերու մէջ զոյգ
 Ու քեւերուն մէջ սեղմած կաթոզին ,
 Տըխուր մի փոշայ փայլերով առոյգ ,
 Կերբար բըռնելով լայն համբան փաղփին :

Առուի պէս փրփին կը հոսէր հակսէն ,
 Քրքրփնի , անարցունք մարդոց արժասուք ,
 Քրքրփնի — զոր հրզօր մարդիկ կը կաթեն —
 Ազդեցիկ քան մի որդեգուրկ մօր սուգ . . . :

Մէյ մ'ալ մենչուկը — իբր մի շան փած
 Քուրչի մէջ փառքուած մանչ մ'էր այն մարմին —
 Ճիչ մ'հանեց նըւաղ , հառաչ մը՝ նեղուած . . .
 Այն ասէն մրմնաց փոշան սրճագին :

« Ողորմէ ով Տէր , մենչուկիս վըրան
 Թող որ գէթ ապրի ժամեր ալ երկու ,
 Միւռոնով օծուի իր փրփն ու բերան ,
 Ի՞նչ , պիտի մեռնի՛ առանց կնիւելու » . . . :

« Թող այս մեր կեանքը անիծեալ ըլլայ ,
 Որ կստիպէ մեզ կենալ հոն ուր որ
 Չիկայ մի սուրբ ժամ , գէթ մի փահանայ
 Որ կընէ , կարգայ աղօթք գօրաւոր . . . » :

Լըռեց ու բացաւ դէմքն իր սրղեկին ,
 Ծեփուած արձանի մ'պէս սրճոյն գրքաւ ,

Յայնժամ « արցունք մը » ու փրօք քախժագին
Հոսեցան մըղուած իր պէխերէն քաւ . . . :

— Հոսեցաւ մենչուն մեռնելո՞ւն համար ,
Բընաւ , այլ փանգի կ'մեռնէր անկընիք . . .
Եւ ո՞վ գիտէ թէ որքան պիտի լար
Տըղեցգէն — հիւանդ իր դժբաղդ կընիկ — :

Այդ սաք արցունքը եւ փրօքնը հոծ
Երբ անմեղ մանկան դէմքը լուացին ,
Թարք մ'ըրին աչերն , քարք մը սիրահոս
Եւ փոյք մարեցան , հիկով մը վերջին . . . :

Մինչեւ այդ պահը իր թելերն հուժկու
Օրրանն էր անմեղ իր հեզ սըղեկին ,
Իսկ այդ վայրկենին շիրիմն ահարկու
Իր մանկան , վիհն՝ իր սիրոյ քանկագին . . . :

Եւ քրտուտ փոռան կարծեց թէ Ասուած
Այդ պատիժն իրեն սըլաւ անպատհառ ,
Քանգի շարժ չէր մըկըրել սըլած
Եւ ~~անհոգ~~ յանձնեց գայն սասանին չար . . . :

Եւ մահապարսի մ'պէս որ իր գոհին
Վընուած է կըրել արիւնոս շապիկ ,
« Քրտանց » մեջ քաթխուած եւ բըռնած իր հին
Ճամբան դեպ փաղափ կը դիմէր բոպիկ . . . :

Արեւուդ մեռնիմ , աման սերպասալա ,
Գեթ մի աղօթքով քաղէ իմ ջանին ,
Ու երթամ տունը լուր տալու ապա
Մեր զննորներուն որ հանգիստ լինին :

— Ես այն չը կընգուած մանուկը երբեք ,
Սուրբ գերեզմանը քաղել չեմ կրնար ,
Ըսաւ քահանան հօրը վրէժաբեկ ,
Ու գնաց ցնցելով իր մօրուքն երկար :

Եւ յուսակըսուր փոռան մի անեղ
Անեծք ժայթքելով խորունկէն արտին ,
Քեւոց մեջ առաւ իր մանկիկն անմեղ
Եւ անհետ եղաւ փողոցի մ'ետին :

Տարաւ զայն մօտի լեռը ամալի
Դրաւ այն պաղած մարմինը գետին ,
Քացաւ զոյգ փուշը սրղուն վրայի ,
« Լալով » զայն սեղմեց վրայ իր արտին . . . :

Ապա իր հուծկու մասներով շուտով
Փորեց գերեզման մ'իւր մենչուն յարմար ,
Լաւ մը զայն փաթեց ու փոսն անվրդով ,
Ձեռեղեց , ապա ըսաւ դողահար :

« Տրդեկս անպարս է , ով Աստուած արդար ,
Իմն է յանցանքը պատուհասն ինձ տ'ըր ,
Քուկին անողոք վրեժն ինձմէ առ ,
Ու բաց մենչուկիս արեայութեանդ դուռ » :

Ըսաւ ու լացաւ, համբուրեց կրկին,
 Ու այն ինչ հողով ծածկելու վրայ էր,
 Մէյ մ'ալ մեկէն մեկ դեմով զուարթագին
 Հրեշտակ մ'երեւցաւ իրեն լուսաներ:

— « Մի' լար, ով խեղն հայր, ըսաւ, բու որդիդ
 Մըկըրտուած էր երբ սարի Տիրոջ մօտ,
 Մկըրտուած սուրբ ջրի սեղ փրտովդ վրնիս,
 Միւռօնի սեղ մի արցունքովդ խանդոս . . . »:

« Ահա այն հոգեակն զոր բու սրտահոս
 Քիտր ու արցունքովդ սրբագործեցիր,
 . . . Հոգեակ մը ցուցուց . . . Էւ բըռաւ անխօս,
 Ետին ձրգած զոյգ մը հետք լուսածիր . . . »:

Այն ասէն խեղն հօր փրտնէր հակտուն
 Շոգիացաւ մի ժրպտի մէջ անցաւ,
 Խրնդալով լեցուց փոսիկն իր սրղուն
 Ու գնաց կրկնելով, « սրղաս կնիւեցաւ . . . »:

1901 Ապրիլ

Վ Ա Ր Դ Ո Ւ Կ Ն Ո Ւ Լ Ո Ւ Ս Ւ Կ Ը

Հ Ա Ց Ի Ա Ր Տ Ը

Ա.

Ան գաւակն եր մի հովուի գեղացի ,
 Էն ալ աղջիկն եր մի երկրագործի ,
 Ան ամբողջ գեղին « մենչն » եր սիրասուն
 Էն ալ « լիւս աւելինն » ամբողջ գեղացուն :

Էն մանկամարդ եր , ան ալ սրղամարդ
 Էն լուսընկայ մ'եր ան ալ գարնան վարդ ,
 Էն երկնքէ մեջ փայլող լուսնակն եր ,
 Ան իրերէր մեջ վարդ մը գարնանուեր . . . :

Երբ մանուկ էին իրենց գեղակին
 Զոյգ սարերուն պէս էին անմեկին ,
 Գարնան՝ զեփիւռին ու վարդին նըման
 Կը գուրգուրային իրարու վըրան :

Էն ասաներեք եր ան ասանուք սարու
 Երբ նըժանեցին զանոնք իրարու ,
 Բայց « պահպանիչ » ը այն սրսապարար
 Վարդ ու լուսնակին չափ զատեց զիրար . . . :

Եւ հիմայ երկու սարիք 'ի վեր
 Իրարու ծըպսին շատ էին ծարուեր

Բայց գեղին այն հին կանոնն անօրէն
Կարգիլէր զիրար սեանել խսօրէն :

Միայն են՝ երեք օրը դեռ մի հեղ
Կը խրկէր անոր բարձ հաց մը համեղ ,
Զոր ինք կը սանէր մանուկ օրերուն
Ընկեր Վարդուկին ժրպսով մ'երերուն . . . :

Բ.

Աշուն գիշեր մ'եր , մօտ էր աղօթքան ,
Ախորներն առջին հաւքունին դրան
Կ'երգէին անգուլ ձայնով մը կերկեր
Երբոր Վարդուկը բացաւ իր աչքեր :

« Իմ Լուսիկ » հեծեց ու ապա հագաւ
Արտօրանով իր կրտսէ հալաւ ,
Լըւաց իր երես , ըսաւ իր հայր մեր ,
Աղօթք զոր իրեն ուսցուց իր մեծ մեր :

Ու պահիկ մ'եսքը դուրս ելաւ խանդոս
Իր առջեւ խառնած արջառներուն հօտ ,
Ու ննդուկներուն երգին հետ ինք էլ
Մըրընգին ձայնով ըսկըսաւ երգել :

« Վարդուկին սրբինգն է , ջան՝ Վարդուկին »
Կըսէր հառաչելով գեղացուն աշկին ,
« Լուսիկին նշանածն է » կը մըրմըրար
Գեղին տղամարդն էլ հառաչելով մ'երկար :

« Վարդուկս է, հրեշտակս իմին պահապան,
 էժ ու կառերուն ընամ էս ղուրպան,
 Կառերն ին ծաղիկ, պլպուլ սրբինգն էլ
 Լալկան ծաղկներօք կարունն է իննն էլ » :

Հեծեց Լուսիկն էլ, առաւ մի բարմ հաց,
 Հաց զոր բոնիրեն դեռ նոր էր հանած,
 Ու անոր ղրկեց քրոջն հետ Վառվառ
 Ուրախ արցունքով մ'աչփն սիրավառ . . . :

Խառնեց բոնիրին կրակն որ արծարծիլ
 Ըսկսաւ ցանցներով անհամար մեծիլ . . .
 Հին յիշատակներ ծրնան մեջ սրին,
 Կարծես բոնիր-սիրեն խառներ ձեռքի քին . . . :

Իսկ Վարդուկն ուրախ օրուելով չորս դին
 Կ'ածեր իր սրբինգ խանդ սալով հօտին,
 Տեսաւ հեռուանց հացն ու էն կը խրկեր,
 Կեցաւ դիտեց զայն աչքով շատակեր :

« Կրնա ու հիմմեկ խապար տուր էնոր
 Խմելը մեր տուն 'տի ուտենք ծնրնդին օր »,
 Ըսաւ առաւ հացն Վառվառին ձեռքեն
 Ու բաժնրւեցաւ երգելով մրտեն :

« Անուշիկ Լուսիկս, ըմպեն օր երկին
 Կ'ըլմանի վառող ներմկուկ լուսրնկին,
 Էչերն լուսրնկին սեւերն են խորունկ,
 Մաղն էլ լուսրնկին բակն է յիւտերցունք . . . » :

Իրկացի էր եղած . Լուսիկն իր գուլպան
Առսւրնէ 'ի վեր կ'հիւսէր անխափան ,
Ճաղերն սուրերուն պէս մարտիկներու
Կը ծեծկուէին հետ կարծես իբարու :

Եւ մինչդեռ անդուլ գուլպան կը հիւսէր
Մըսֆուլ կորոնար երջանիկ յոյսեր ,
« Հոն տեղ տի ուտեմ խէշը ծընընտին
Հարս եղած , կը պա՛ծ Վարդուկիս կրտսին » :

Կրսէր երբ մէյ մ'էլ գերեզմանին դին
Իր աչքին զարկաւ մի մեծ բազմուքին ,
Ակամայ դողաց , մէկը մեռած էր ,
Քայց ո՞վ էր արդեօք մասդըռո՞ւկ քէ ծեր :

Խորհեցաւ մի քիչ , ո՞վ էր այդ մեռել
Ըսաւ , « գեղին մեջ հըւանս չ'ըկար էլ . . .
Մի դարիպ անցորդ մարդուկ է հարկաւ » ,
Մէյ մ'ալ Վարդուկին շունն աչքին զարկաւ . . . :

Հազիւ նիկ մ'հանեց նիկ մը սրսագրաւ
Իր նսած տեղէն արծուի պէս քրռաւ ,
Ու վարն են տեսաւ իր ախպէր Գիրգոր ,
Որ անմըխիքար կուլար գլխիկոր . . . :



Մեք օր ետքն էր , Լուսիկեց 'ի տուն
Հացը բոնիրին մեջ կեփէր առտուն ,
Լուսիկ իր մօր ֆով անւարժ էր նստել
Դեմն էր տղունած , մարած աչքերն էլ :

Մէյ մ'եկ գողի պէս առաւ մի քարմ հաց
 Իր մօրք փոխէն դուրս ելաւ կամաց,
 Բացաւ սանը դուռ ու փայլով ըստայ
 Գրնաց հանելով հառաչ մը հրատապ :
 Քիչուկ' մը ետքը վարդի տունկի մ'փով
 Լուսիկը հասած էր արտօրանփով,
 Հոն դեռ նոր դիզուած հողակոյս մը կար
 Որուն վրայ ինկաւ ընկնած ու անկար . . . :

Երկար հոն լացաւ սալով բիւր անէծ
 Էն անողորմ բաղդին որ զանի սպաննեց . . .
 Ու միտս կը կրկնէր հառաչով մ'երկար
 « Որք ձրգեցիր ջան Լիւսիկդ, էծդ ու կառ... »:

Վերջապէս կանգնաւ եւել սրժգունած,
 Հանեց անուքին սակէն այն քարմ հաց,
 . . . Տըւաւ Վարդուկին . . . ու գրնաց հոնկից
 Թողլով հոն արցունքն իր դառնակսկիծ . . . :

Իր գունաս դեմքը տեսնող գեղացիք
 « Վարդուկը մեռա՛ւ չապրիր էլ Լիւսիկ »
 Կըսէին երբ էն ալ խորէն արտին
 Կըսէր « Խեղճ անոր հետ 'տուտիմ ծընընդին... »:

Պ.

Խքման իրկունն է, թոնիրին վըրայ
 Խեղճ ազմըկով կեռայ ու կեռայ,
 Ու մեր կըլխադիր ձեռքը մի շերտի
 Լալով մտիկ կընէր խեղճն ետն ու եփ :

Մէյ մ'եկ նըւաղկոս մի ձայն կուսական
 « Մէրիկ » ձայնեց , ձայն մը նըւաղ այնքան
 Որ կարծես Լուսկին ձայնին արձագանգ
 Հողուին խորէն կուգար մեղմայանգ . . . :

Արցունքը սրբեց մէրիկ կըլլազիր ,
 Իր աւելինին փոլ վազեց խանդալիր . . .
 Մի նայուածք ուղղեց են' բարի մօրկանն ,
 Տեսնելով անոր աչքերը լալկան :

« Էլ մի լար ֆանի Վարդուկիս կըրկին
 Մեջ հանգիստ անել պըս' երթամ երկին . . . »
 Ըսաւ գոցեց պահ մ'իւր աչքերն աղօս
 Կարծես էլ կըզգար գերեզմանին հոս . . . :

Պահիկ մ'եսք դարձեալ բացաւ իր աչքեր
 Ու ըսաւ իր մօր մի ձայնով կերկեր ,
 « Միսորով խեշը . . . վաղը — ծընընտին —
 Վարդուկիս . . . հետք պիտ' ուտեմ ենդին . . . » :

« Միաւոր ունիմ . . . երկու հաս տիկ . . .
 Մեկն որ . . . Վարդուկիս փովն . . . ընծիկ թաղեք . . .
 Մեկեղն էլ' մեկ . . . տարք դի ցանեք ցերեմն . . .
 Իմ ու Վարդուկիս . . . գերեզմանին . . . վրէն . . . » :

Ըսաւ մեղմաձայն , լըռեց շընչահաս
 Զիղերն եր թուլցած , ձայնըն եր ընդհաս ,
 Աչքերն եր գոցուած , կարծես թէ մահուն
 Մըրափը կընկներ աչքերն այդ պահուն :

Վերջին հեղ մ'ալ շուրթն ու աչքն էր բացուեր,
 Շուրթը «խօսք կուսաւ» հեծեց, աչքն էլ «մեր»...
 . . . Առաւ մօր խոսում ու գնաց խնդագին
 Ծնունդին խեւն ուսել հետն իր Վարդուկին . . . :

Ե.

Մայիսն էր եկեր, վարդեսունկին սակ
 Կը փայլէր հունձֆի շարք մը բոլորակ,
 Որ շիրմին շուրջ «լիւս աւելին» «վարդ մենջ» ուն
 Պարիսպ մ'էր եղած, պարիսպ դողդոջուն :

Յորենի հասերն պէս մարգրիսներու
 Շարուած էին էլ վրայ իրարու . . .
 — Քարթիչներուն մեջ տողաշարուած այն
 Լուսիկ աւելինին արցունքին նրման — . . . :

Իսկ վարդեսունկը կերպով մ'անսովոր
 Վարդով զարդարուած էր հարիւրաւոր,
 Հիւրընկալելով մեջ իր ուսերու,
 Մի գոյգ ծիծառներ մին էգ միւսն արու :

Ծիծառներ, որոնք փութկոտ թռուիչով
 Կիջնային երկու շիրիմներուն տով,
 Կսցելու խանդոտ ցորենի հասեր
 Որք — ձագի կարնուկ — անուշ էին դեռ :

Բայց ծիծառները կսցէին մինչդեռ ,
 Գերեզմանին վրան ու շուրջը հասեր ,
 Կիյնային աննէտ հոն , մօտն ու հեռուն ,
 Կակուղիկ հողին վըրայ բիւրբերուն . . . :

Կարծես վարդ մենչուկն ու լիւսիկ աւելին
 Ներս կը փառէին զանոնք խանդագին
 Եւ այն սիրուն զոյգ սիրողներն անմեղ
 Կուսէին դեռ այն քարմ հացը համեղ . . . :

Զ.

Տաս սարի եր ուր Լուսիկն ու Վարդուկ
 Մոռացեր էին աշխարհին տաղտուկ . . .
 Հոն , հողուիին կից լայնանիւտ մի ծառ
 Վարդերով պսակուած եր հարիւր հագար :

Ծառին շուրջըն էլ մի ահագին արտ
 Կը փայլէր հունձով մը կանաչազարդ ,
 Որուն չորս բոլորն սոխակի անթիւ
 Սիրավառ զոյգեր կերգէին խանդիւ :

Հողերի աւելին խանդոտ Լուսիկին ,
 Հովիւի զաւակ արտոս Վարդուկին
 Սիրոյ յիշատակ այն արտին անհուն
 Գեղացիք « հացի արտ » զրէին անուն . . . :

Աղփաս հողերը սերմն հոնկից կառնէր ,
 Աղփաս հովիւն ալ իր արջառին կեր ,
 Մրսերն սիրոյ դաս կառնէին հոնկից ,
 Երգէ՛լ , օրհնելով անոնց սերն անբիծ . . . :

(Քնածին վիպակ)

1901 Մայիս

Խ Ր Տ Ա Ն Ա Ն Տ Օ Ն

Ա.Ռ. Բ. Ի.

Ուք սարեկան էր երբ չիյտեմ ինձոր ,
 Գետն ինկած էր մի չարագուռակ օր ,
 Մինչեւ փրկեցին զինք ջրէն անեղ
 Մեռեր ողջընցեր էր մի քանի հեղ :
 Այն օրէն ի վեր հազիւ մի քանի
 Անգամ գետին մօտ գացած էր անի ,
 Եւ անոր համար գեղացիք իրեն
 Խրատն անունը տուին արժանօրէն :

• •

Հինգշաբթի օր մ'եր , գեղացիք ամեն
 Պատարագէն ետն ելլելով ժամէն
 Գետը կ'դիմէին վայելելու հոն
 Մրսերն հրմայող Համբարձումին տօն :

Նորեկ անձրեւէն յորդած այն օր գէտ
 Կը քեր կը քաներ իր ընթացքին հետ
 Ինչ որ կը գտներ ծառ ուս ու ժայռեր
 Զորոնք կարծես թէ մարսած կըզգայուէր . . . :

Եւ իր այիքներ մի ձայնով խըռպոս
 — Կասողած ուղտերու շարքին պէս շրփոք —
 Խօլ մի ուսնումով ժայռերու վրայէն
 Կը մագըրցէին իբր լեռներու հէն :

Հոս ծերուկ մամբ կերակուր կեփէր
 Հոն ծերուկ պապը կ'խոռկար անտարբեր,
 Քիչ մ'անդին մի խումբ աշխոյժ սրղամարդ
 Կ'խաղային խաղեր հուժկու ու զուարթ :

Անդին կոյսեր ալ լուսնեկին պէս վառ ,
 Ապրիմ մեռնիմ եւ սադր (1) ու վարդուվառ
 Կը քաղէին երբ մէյ մ'ալ սուր ու թաւ
 Զայներու աղմուկ մ'է վարէն փրքթաւ :

« Հասէք ծօ սրղէք , Աննան հուրն ընկաւ » :
 Ու ամեն դիէն գեղացիք անձկաւ
 Գետակ կը դիմեն կը տեսնեն ըզնէ
 Որ աչքի դիմաց մահուան կը դիմէ :

Ամբողջ գեղացին գետին երկու դին
 Դիզուած կը դողան ձեռներնին արթին
 Բայց ոչ ոք բընաւ կը համարձակէր
 Ազատել Աննան ջրէն շատակեր :

(1) Ծաղիկ մը , կէշին կիւզիշի :

Գեղացուն սուր ու քաւ նիշերուն մեջ
 Գեօրն շառայր կուռ անելեւէջ
 Դեմ (1) մըն կարծես, դեմ մը որ սակայն
 Կը հեզներ նիչն ու վայնասունն այնքան :

Մէյ մ'ալ մարմնի մը ջուրն ընկնելուն ձայն
 Ելաւ ու ամեն աչք այն կողմ դարձան,
 « Ապա՛ խրսանն էլ նուրն ընկաւ սրդեք »,
 Կրկնեցին ամեն գեղցիք արտաբեկ :

« Աննան կու սիրէր, ու չըսըւին էլ
 Ինքն էլ նուրն ընկաւ էնոր հետ մեռնել . . . »
 Ըսին մեղքըցան գեղացիք ամեն
 Բայց ո՞վ պիտ' փրկէր երկուքն ալ ջրէն :

Ամենք յուսահաս կուլան ու կողքան
 Մէյ մըն ալ յանկարծ զարմանայի բան,
 Ի՞նչ տեսնեն խրսան Անտոն ձուկի պէս
 Կ'լողար առոյգ գետակին երես . . . :

Կըրողէն եւել հուժկու ու արագ
 Պատռելով անցաւ ալիքներն վայրագ,
 Ու նիտս Աննային դեմ վարէն կանգուն
 Կեցաւ կէտի պէս արի աննրկուն :

Մինչեւ որ հասաւ էն կիսակենդան
 Այն աստն անոր մազերը խրրսան
 Բազկին պրլլելով մըտնելէն առոյգ
 Լողաց իր քելին սակ սեղմած իր գոյգ . . . :

(1) Զայնատութիւն :

Վերջապէս փրկեց զանի՛ ապահով
 Տարաւ զայն դրաւ իր հայրիկին ֆով
 Որ պագաւ իրեն նակսէն գեղեցիկ
 Եւ խոսացաւ սալ անոր իր Աննիկ . . .

•
•

Հիմայ դարձեալ նոյն խոսան Անսօնն է
 Որ գետին երեսն չը նայիր զոնն ,
 Որ գետին անուն երբ լսեր՝ իր աչեր
 Մեծ մեծ բանալով ե՛ս ե՛ս կը փախչեր :

Եւ երբ գեղացիք հարցընեն « ախպար
 Ինձո՞ր հապա դուն խալսեցիր Աննան ,
 Երդում կընէ որ ինք չէր անպատեալ ,
 Կամ հրեշտակ մ'եր եւ կամ սասանան . . . » :

Մարտ 1901

ՆԱՅՈՒԱԾՔՆԵՐՈՒ ՇՈՒՐՁԸ

Տեսայ Տրխուր աչեր լալկան
 Իր մեկհասիկ զաւկէն զրկուած մի հեզ մօրկան ,
 Բայց , ըսի . « Է՛հ , գեթ մեկ ասեմ
 Վայելած է ինչ որ կըզգան մայրերն ամէն » :

Տեսայ քախձոս աչֆեր լալկան
 Իր սիրողին գրկին զրկուած մի աղջրկան ,
 Ըսի , « մի այլ գրկի մեջ սաք
 Կրնայ մոռնալ հին սիրելւոյն դառն յիշատակ » :

Նոյնպէս տեսայ նայուածքն հեւեոս
 Տըղամարտի մ'որ կը մեռնի սիրոյ կարօս ,
 Ըսի մթսքես , « երբոր աչուիդ
 Սառի կ'մոռնաս կոյսն , իր համբոյրն , սերն ու ժըպիս » :

Տեսայ կոյրի մը բաց աչեր
 Որք կը գլորուին կոպիւններուն մեջ անհամբեր
 Դեմքի մ'գեղին ընդ միտս կարօս ,
 « Գոնէ , ըսի , կըզգայ ներա համբոյր սրտս » :

Տեսայ աչֆերն համրի մ'սըխուր
 Որուն շքրունք կը փրփրէին — քէել 'ի զուր —
 Պարզելու իր սերն ու յոյզեր ,
 Ըսի , « գէթ իր աչֆով կրնայ յայտնել իր սեր » :

Բայց տեսայ աչքն երկու ամսու
 Մօրմէն զրկուած գեհնասողիկ մի հեգ սըղու ,
 Եւ յուզմունքով ես իւրովի
 Ըսի , « անա ամենէն ալ հեգն իրաւի . . . » :

Որովնէտէլ դիտեցի նիւղ
 Այն աչքին մեջ մի միամիտ այլ խորունկ վիտ ,
 Վիտ մը քէել արագանցուկ
 Սակայն վիտ մը անգէտ , լըռին ու անարցունք...:

Այն նայուածքին մեջ մտր
Նրկարուած էր ընդլրզող այն ցաւերը որ
Պիտի ըզգար դեռ մի մանուկ ,
Երբ տեսներ մայր մ'որ կրպագներ իր զուարթմանչուկ :

Հոն տեղ դարձեալ նրկարուած էր
Այն վիտեսն ալ որ պիտի ըզգար երբոր լրսէր
Այն զովեսներն զոր իրենց մօր
Վրայ ընէին պիտի խանդով մը սիրածոր . . . :

Այն ցաւերըն ալ թախծագին
Զոր պիտ' ըզգար երիտասարդ մեջ հասակին
Երբոր տեսներ մանչ մը պըզտիկ
Որ կարօտով մը կը քամեր իր մօր ըստինք :

Պիտ' գայթակղէր նա այն աստն
Թէ համբոյրով մօր չըստքամ իր շուրթէն
Պիտի ըզգա՞ր այն հանոյք լուրջ
Որ կերագեն մարդիկ ամէն համբոյրի մ'շուրջ . . . :

Ու երբ մեծնայ շուրթով կերկեր
Զըպիտ կրնայ իր մանկուրեան յիշել յուշեր ,
Զորս կերկնեն միտս մարդիկ ամէն ,
Քաղցրիկ յուշեր որոնք կեանքը կը սիրցընեն . . . :

1901 Ապրիլ



Վ Ր Ի Պ Ա Կ



				<i>Սխալ</i>	<i>Ուղիղ</i>
Էջ	11	սուն	5	արթննալու	արթննալուս
»	25	»	վերջին	Պահպաներու	Պահպաներա
»	28	սող	24	արցունիք	արցունք
»	32	»	4	Մշտագիտ	Մշտագիտ
»	35	սուն	4	ծնծղա	ծնծղան
»	48	»	5	խմելը	խեւը





2013

